ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ ԼԵՆԻՆԳՐԱԴՈՒՄ

1882 թ. հիմնադրված Ռուսաստանյան Պաղեստինյան ընկերության գլխավոր խնդիրներից մեկը մշտապես եղել է Մերձավոր Արևելքի քրիստոնյա ժողովուրդների պատմության և մշակույթի ուսումնասիրությունը։ Ընկերության գոյության ընթացքում նրա աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերել Վ. Ռ. Ռոզենը, Ն. Յ. Մառը, Պ. Կ. Կոկովցովը, Ֆ. Ի. Ուսպենսկին, Ն. Վ. Պիգուլևսկայան և ուրիշ նշանավոր արևելագետներ։ Ընկերությունը այժմ շարունակում է իր գիտական գործունեությունը՝ բաժանմունքներ ունենալով Մոսկվայում, Լենինգրադում, Երևանում և Դորպատում։ Լենինգրադի բաժանմունքի խնդիրների շրջանակը մասնավորապես ընդգրկում է բյուզանդական մշակույթի և նրա հետ սերտորեն առնչվող ասորական, հայկական, արաբական, զպտական, եթովպական, վրացական և այլ մշակույթների ուսումնասիրությունը։

1983 թ. հունիսի 6—8-ը կայացավ Ռուսաստանյան Պաղեստինյան ընկերության (ՌՊԸ) Լենինգրադի բաժանմունքի գիտական նստաշրջանը՝ «Պատմագրության ձևավորումը և զարգացումը Մերձավոր Արևելքում (բյուզանդական մշակութային շրջանակ)» թեմայով։ Նստաշրջանին մասնակցում էին գիտնականներ նաև Մոսկվայից, Երևանից, Թբիլիսիից և Բաքվից։

Բյուզանդական պատմագրության ծագման և զարգացման առանձնահատկություններին էին նվիրված Յ. Ն. Լյուբարսկու («Բյուզանդական պատմագրության ուսումնասիրության նոր տենդենցներ»), Ի. Ս. Չիչուրովի («Վաղ բյուզանդական պատմագրության ձևավորումը (մինչև IX դար)») և Ի. Ն. Լեբեդևայի («Համաշխարհային պատմության պարբերացումը ուշ հունական ժամանակագրություններում») զեկուցումները։ Ասորական, եթովպական, զպտական, ռուսական, իրանական և արաբական պատմագրություններին և բյուզանդականի հետ նրանց ունեցած առնչություններին էին վերաբերում Ե. Ն. Մեշչերսկայայի և Ա. Վ. Պայկովայի («Ասորական պատմագրության ուսումնասիրության խնդիրները»), Ն. Ի. Սերիկովի («Մուսուլմանական արևելքում բյուզանդական հոգևոր մշակույթի թափանցման ուղիները. Բար Հեբրեոսը և բյուզանդական պատմական ավանդույթը»), Ս. Բ. Ջեոնեցովի («Եթովպական պատմագրության ծագումը»), Ա. Լ. Խոսրոևի («Ունե՞ն արդյոք զպտիները պատմագրություն»), Գ. Մ. Պրոխորովի («Շարունակական թեման ռուսական տարեգրություններում»), Ա. Ի. Կոլեսնիկովի («Պատմական գիտելիքները սասանյան Իրանում»), Օ. Գ. Բոլշակովի («Արաբական պատմական գրականության ժանրերը»), Վ. Վ. Լեբեդևի («Միջնադարյան արաբական պատմագրությունը և բանահյուսությունը») և Ա. Գ. Լունդինի («Մուհամեդ մարգարեի գրասենյակը») զեկուցումները։ Կ. Բ. Ստարկովայի («Աստվածաշնչի պատմագրական շերտը»), Է. Դ. Ֆրոլովի («Նախախնամականության գաղափարը անտիկ պատմագրության մեջ») և Ի. Շ. Շիֆմանի («Էթնիկական և քաղաքական սոցիումը հելլենիստական պատմագրության մեջ») զեկուցումները նվիրված էին հին հրեական և անտիկ պատմագրական ավանդույթների մեջ բյուզանդական պատմագրության բընորոշ նախատարրերի հայտնաբերմանն ու քննությանը։

Վրաց պատմագրության ծագման և զարգացման առանձնահատկություններն էին արծարծվում Գ. Վ. Ծուլայայի («Պատմական գիտելիքների հավաքման վաղ շրջանը ֆեոդալական Վրաստանում»), Գ. Գ. Ալասանիայի («Հին վրացական պատմական ժանրերի որոշ հարցերի դասակարգումը») և Մ. Ս. Ջխարտիշվիլու («Աղբյուրների հղման ձևերը հին վրացական պատմական գրականության մեջ ըստ «Քարթլիս Ցխովրեբայի» սկզբնական մասի նյութերի») զեկուցումներում։ Ռ. Կ. Կիկնաձեն քննարկում էր «Վրաստանի պատմության աղբյուրագիտության ձևավորումը որպես գիտություն» հարցը։ Յ. Ռ. Ջաֆարովը իր զեկուցման մեջ («Հոների քրիստոնեացումը ըստ Զաքարիա Միթիլենացու «Ժամանակագրության») ուրվագծում էր հոնա-աղվանական հարաբերությունները VI դարում։

Հայագետներից նստաշրջանին մասնակցում էին Կ. Ն. Յուզբաշյանը (ՌՊԸ Լենինգրադի բաժանմունքի նախագահ), Ա. Հ. Հակոբյանը (ՀՍՍՀ

ԳԱ արևելագիտության ինստիտուտ) և Ա. Բ. Սարգսյանը (Մաշտոցի անվան Մատենադարան)։

«V—VII դդ. հայկական պատմական երկերի կառուցվածքի մասին» զեկուցման մեջ Կ. Ն. Յուզբաշյանը անդրադարձավ մի քանի խնդիրների։ Ներկայումս V—VII դդ. հայոց պատմագրության հուշարձաններն ունեն ժամանակակից մակարդակով կատարված հրատարակություններ և թարգմանություններ, սակայն այդ հուշարձանները գնահատելիս հաճախ անտեսվում են ժանրի առանձնահատկությունները, որոնք հիմնականում կանխորոշում են այս կամ այն հեղինակի ոճը և պատմելաձևը։ Ըստ զեկուցման թեզի, առկա պատմական երկերը բարդ են և իրենցից ներկայացնում են ամենաքիչը երեք տարբեր ժանրերի միաձուլում՝ էպոս, վարքագրություն և բուն պատմագրություն։

Ա. Բ. Սարգսյանը «Հովհաննես Դրասխանակերտցու պատմագրական սկզբունքները և Մովսես Խորենացու «Պատմությունը» զեկուցման մեջ ցույց էր տալիս երկու կարևոր հանգամանք։ Առաջին. պատմության հին շրջանը շարադրելիս Դրասխանակերտցին հիշատակում է ոչ թե իր անմիջական կամ միջնորդավորված աղբյուրը, այլ սուրբ հեղինակային սկզբնաղբյուրը։ Երկրորդ. Խորենացու «Պատմությունից» քաղած հատվածները վերարտադրելիս նա աշխատում բառացի չպատճենել աղբյուրը, սակայն այդ անել այնպես, որ չտուժի խոսքի ոճը և նյութի փաստական կողմը։

Ա. Հ. Հակոբյանի «Մովսես Կաղանկատվացու «Աղվանից պատմության» վաղ աղբյուրները և աղվանից պատմագրության ծագումը. էթնիկ-մշակութային ասպեկտ» զեկուցման մեջ առանձնացվում և բնութագրվում էին «Աղվանից պատմության» VI—VII դարերի աղբյուրները («Վաչագանի վեպ», «Վիրո կաթողիկոսի պատմություն» և «684 թ. պատմություն»)։ Այդ աղբյուրների առանձնահատկությունների քննության հիման վրա հեղինակը արձանագրում էր, որ Աղվանքում ձևավորված պատմագրությունը քաղաքական առումով «աղվանական» ուղղվածություն ունենալով հանդերձ՝ էթնիկ-մշակութային տեսանկյունից ամբողջապես հայկական էր։

ՌՊՊԸ Լենինգրադի բաժանմունքը գիտական սերտ կապեր է պահպանում Երևանի մի շարք գիտահետազոտական հաստատությունների հետ, որի դրսևորումներից մեկն էլ մեր մասնագետների մասնակցությունն էր նստաշրջանի աշխատանքներին։

Ա. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ